

10435



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի
Պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան



Արամ Մեյմարյան

«20» 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 194 - 24

Նախաձեռնող՝

«Լուր» ՍՊԸ

Քաղաք Երևան, Միկոյան 13, բն. 42

Գործունեությունը՝

Վերին Դվին համայնքի միջնակարգ դպրոցի կառուցում
Արարապի մարզ

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 194 - 24

«20» սեպտեմբերի 2024թ.

**Արարատի մարզի Վերին Դվին համայնքի միջնակարգ դպրոցի կառուցման
շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝ «Լուր» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիա՝ «Բ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝ Արարատի մարզ, Վերին Դվին համայնք

Ներածական մաս. «Լուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնահատման հաշվետվությամբ նախատեսվում է Արարատի մարզի Վերին Դվին համայնքի Ա. Խանջյան 2 հասցեում՝ միջնակարգ դպրոցի կառուցում:

Գործունեությունն իրականացվելու է Վերին Դվինի համայնքապետարանի կողմից տրամադրված 2024թ. ապրիլի 9-ի N03 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա, անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 1.804 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունն իրականացվում է քաղաքաշինության կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվերով իրականացվող «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոցների» ծրագրի շրջանակներում:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի, 8-րդ կետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Վերին Դվին համայնքի միջնակարգ դպրոցը նախատեսվում է կառուցել անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված հողամասի սահմաններում, նոր դպրոցի կառուցումից հետո գոյություն ունեցող դպրոցի շենքը նախատեսվում է ապամոնտաժել: Կառուցապատման տարածքի ամենամոտ շինությունը բնակելի քարե տուն է, որը տեղակայված է նախատեսվող գործունեության տարածքի եզրագծից մոտ 10 մ, իսկ դպրոցի շենք-շինություններից ավելի քան 35մ հեռավորության վրա:



Մակերեսի ռելիեֆը հարթավայրային է՝ բարձրությունների նիշերի փոքր անկմամբ: Անմիջապես հետազոտվող տեղամասի մակերեսը մասամբ դարավանդված է: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 944.0-947.0 մետրի սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից ստորգետնյա ջրերը պատկանում են ծակոտկենսադատարկությունների ջրերի տարատեսակներին: Հորատման աշխատանքների իրականացման ընթացքում գրունտային ջրերը մինչև 11.0 մետր խորությամբ չեն բացահայտվել: Համաձայն ֆոնդային նյութերի տվյալների՝ դրանք տեղադրված են 15.0 մետրից խորը հորիզոններում:

Կառուցապատման տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- ընդհանուր հողատարածքի մակերեսը՝ 18040 քմ,
- կառուցապատման մակերեսը՝ 3548 քմ (19.6 %),
- մասնաշենքերի թիվը՝ 2,
- բացօդյա մարզադաշտի մակերեսը՝ 1460 քմ (8 %),
- բացօդյա մարզահրապարակի մակերեսը՝ 478 քմ (2.6 %),
- կանաչապատման գոտու մակերեսը՝ 11184 քմ (61,9%),
- անջրանցիկ մակերեսը՝ 1370 քմ (7.9 %):

Համաձայն նախագծային լուծումների՝ նոր դպրոցը նախատեսված է 432 աշակերտի համար: Կառուցապատման ընդհանուր մակերեսը կազմում է 3548 քմ: Դպրոցը նախատեսվում է իրականացնել երկհարկանի՝ մեկ նկուղային հարկով՝ 3.3մ բարձրությամբ և 620 քմ մակերեսով, որը ծառայելու է նաև որպես ժամանակավոր թաքստոց: Շենքում նախատեսվում է 2 փակ ներքին բակ ապակե ծածկի տակ՝ լրացուցիչ ռեկրեացիոն գոտիներին լուսավորություն ապահովելու համար:

Առաջին հարկում տեղակայված են առաջինից մինչև 5-րդ դասարանների 2-ական դասասենյակներ, նախադպրոցական դասարան, գրադարան ու համակարգչային տեխնիկայի սենյակը, ռազմագիտության սերյակ, ուսուցչանոց-մեթոդկաբինետ, տնօրենի և փոխտնօրենի աշխատասենյակներն՝ իրենց ընդունարանով, աշխատանքի ուսուցման սենյակ, բժշկի սենյակ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների սենյակ, սպորտդահլիճն՝ իրեն կից հանդերձարաններով և մարզիչի սենյակով, ճաշարան և խոհանոց, ինչպես նաև 3 սանհանգուցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Նախատեսված է նաև սանհանգույց հաշմանդամների համար: Մուտքային գոտուն կից հաշմանդամների համար նախատեսված է ուղղահայաց ամբարձիչ, ծնողների սպասասրահ, ինչպես նաև երկրորդ հարկի հետ կապ ստեղծող ամֆիթատրոն:

Երկրորդ հարկում տեղակայված են 6-ից մինչև 12-րդ դասարանների դասասենյակներ, 2 լեզվի սենյակ, հաշմանդամություն ունեցող երեխաների անհատական պարապմունքների կաբինետ, ռեսուրսային կենտրոն, ուսուցչանոց-մեթոդկաբինետ, կենսաբանության և քիմիայի և ֆիզիկայի մասնագիտացված լսարան՝ իրեն կից լաբորատորիայով, հանդիսությունների դահլիճ՝ իրեն սպասարկող սենյակների խմբով, 4 սանհանգույցներ և այլ օժանդակ սենյակներ և տարածքներ:

Հատակագծում դպրոցն ունի ուղղանկյուն եզրագիծ և կարանով բաժանված է երկու հավասար մասնաշենքերի: Նոր դպրոցը նախատեսվում է իրականացնել միաձույլ ե/բ կրող կոնստրուկցիաներով, ներառյալ՝ հիմքերը, սյուները, հեծանները և միջհարկային սալերը: Արտաքին պատերում նույնպես օգտագործվելու են ե/բ կոնստրուկտիվ լուծումներ: Միջնորմերը նախատեսված են 200x400x200 թեթև բետոնի բլոկներից՝ համապատասխան ամրանավորմամբ: Միջանցքների առանցքային չափը կազմում է 3.5 մ որոշ տրոսանների



լայնացումներով: Դասասենյակները 7մ x 7մ առանցքային չափերի են, դրանց միջին մակերեսը կազմում է 48 մ²:

Առաջին հարկի բարձրությունը կազմում է 3.3 մ, երկրորդ հարկի բարձրությունը փոփոխական է՝ ստորին մասում կազմում է 3.0 մ ծածկի տակ:

Սպորտային դահլիճի բարձրությունը հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ կազմում է 7.8 մ, իսկ հանդիսությունների դահլիճի բարձրությունը՝ հատակից մինչև կոնստրուկցիայի ստորին նիշ, կազմում է 4.5 մ:

Դպրոցի բակային տարածքի բարեկարգման աշխատանքների շրջանակում նախատեսվում է բաց մարզադաշտ, բաց մարզահրապարակ, վազքուղի, ճանապարհներ և հարթակներ: Դպրոցին կից նախատեսվում է կառուցել կաթսայատուն, այն հատակազծում ունի 6մ x 9մ առանցքային չափերով: Արտաքին պատերը նախատեսվում է իրականացնել ամրանավորմամբ, իսկ պատերը ջերմամեկուսացնել:

Դպրոցի շենքի տանիքին նախատեսվում է տեղադրել 127.6 կՎտ դրվածքային հզորությամբ արևային ֆոտովոլտային համակարգ՝ կազմված 232 հատ միաբյուրեղային 144 (6x24) կեսբջիջներով, 550 Վտ պիկային հզորությամբ ֆոտովոլտային (ՖՎ) վահանակներից, որոնք բաժանված են 16 ՖՎ խմբի՝ 8 խումբ յուրաքանչյուր փոխակերպիչի համար:

Դպրոցի նախագծում հաշվի են առնվել և ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացվել են ներքին էլեկտրամատակարարման, արտաքին և ներքին ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման ցանցերի և օդափոխության համակարգերի ինժեներական լուծումները, որոնք իրականացվելու են ՀՀ շինարարական նորմերի համաձայն: Հաշվի առնելով, որ դպրոցը գործող է, տարածքում առկա են ինժեներական բոլոր անհրաժեշտ ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման գծերը, հետևաբար նոր տեխնիկական պայմանների ձեռք բերման անհրաժեշտություն չի առաջանում և միացումներն իրականացվելու են արդեն իսկ գոյություն ունեցող համակարգերին:

Դպրոցի համար նախատեսվում է FBR15 կայան՝ 15 մ³/օր արտադրողականությամբ նոր կենցաղային կեղտաջրերի մաքրման կայանի տեղադրում, ինչը համաձայն տեխնիկական ցուցանիշների, լիովին կբավարարի անհրաժեշտ կարիքները:

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերի՝ հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար, դպրոցում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Համաձայն նախնական գնահատման հայտի՝ շինարարական աշխատանքները տևելու են 20 ամիս, ապամոնտաժման աշխատանքների տևողությունը գնահատվել է մոտ 4 ամիս, որի ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ, այդ թվում՝ աշտարակային կռունկ, բետոնատար մեքենա, եռակցման ագրեգատ, բուլդոզեր, շարժական կոմպրեսոր, տոփանիչ, էքսկավատոր, ավտոբետոնատար և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով շինարարական նյութերը տեղադրվելու են բետոնապատ մակերեսի վրա: Շինարարական նյութերից օգտագործվելու են բետոն, քար, ամրան, ավազ, ապակի, ջերմամեկուսիչ նյութեր և այլն: Առաքումն իրականացվելու է պարբերականությամբ, որը կապահովի աշխատանքների անընդհատությունը:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույց չի նախատեսվում: Բետոնը և շաղախը մատակարարվելու են մոտակա բետոնաշաղախային հանգույցից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Շինարարության ժամանակ բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի և ստացվող ավազի ու խճի խոնավացման հնարավոր



շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (50 մարդ), ինչը կազմում է 6143մ³/շին.ժամ: 18040 մ³ ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 2381.28 մ³: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 3017.52 մ³:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ ջրի քանակը նախատեսվում է վերցնել տարածքով անցնող ջրագծից:

Շինանյութերի ժամանակավոր պահեստավորումը, թափոնների կուտակման վայրերը և այլն, կազմակերպվելու են բացառապես նախատեսվող գործունեության տարածքի սահմաններում:

Շինարարական տեխնիկայի մուտքը դեպի դպրոցի տարածք նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող ճանապարհի ետնամասով, ինչը թույլ է տալիս, որ շինտեխնիկայի շարժը որևէ կերպ չխոչընդոտի գործող դպրոցի բնականոն առօրյային և դպրոցի հարակից տարածքի երթևեկությանը:

Դպրոցի կառուցումը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 20700 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից ետլիցքը կազմում է 5300 մ³:

Գործունեության ընթացքում ապամոնտաժման գործողություններից գոյացած շինարարական աղբը գնահատվում է շուրջ 5000 տ, իսկ փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հողը՝ 15400 մ³: Վերջիններիս, ինչպես նաև ավելացած հողային հանույթի հեռացումն ու տեղադրումը կիրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վերին Դվինի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայրում:

Կենցաղային աղբը, որի ընդհանուր քանակը գործունեության ողջ ընթացքում կանխատեսվում է մոտ 3 տ, կտեղափոխվի աղբահավաք ծառայություն իրականացնող ընկերության կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Ապամոնտաժման ընթացքում գոյացած «շինարարության փայտանյութի թափոնները» գնահատվում են երկրորդայի օգտագործման համար պիտանի և կօգտագործվեն կապալառուի կողմից՝ որպես երկրորդային հումք այլ շինաշխատանքներում: Այլ նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ, փայտանյութ, դռներ, պատուհաններ, խողովակներ) կտեսակավորվեն և նույնպես կօգտագործվեն որպես երկրորդային հումք:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքի բարեկարգում և կանաչապատում: Այդ աշխատանքները կմեկնարկեն գոյություն ունեցող դպրոցի հին շենքի ապամոնտաժումից հետո:

Դպրոցի տարածքում առկա են 54 բարդիներ, որոնք տեղակայված են դպրոցի տարածքի մուտքի հատվածի երկայնքով: Այդ ծառերից պահպանվելու են 50-ը, շինարարական աշխատանքների արդյունքում հատվելու է 4 ծառ: Դպրոցի ողջ բակային տարածքը, որը կազմում է 11184 մ² կամ տարածքի 61.9%-ը, նախատեսվում է կանաչապատել արժեքավոր և տեղանքի բնակլիմայական առանձնահատկություններին համապատասխանող բուսատեսակներով, ինչպես նաև ստեղծել ծաղկանոց (75.2 մ²) և սիզամարգեր (9084 մ²):

Հաշվի առնելով ոռոգման համակարգի բացակայությունը՝ դպրոցի կանաչապատ գոտիների ոռոգման նպատակով տարածքում նախատեսված է 46 մ³ տարողությամբ ռեզերվուար, որտեղ նախատեսվում է պաշարել ոռոգման համար համապատասխան ջրաքանակ: Վերջինիս համար ջրի աղբյուր կարող են հանդիսանալ դպրոցի ջրամատակարարման համակարգից վերցված ամբարված ջուրը, ինչպես նաև հավաքված



անձրևաջրերը: Անձրևաջրերը նախատեսվում է հավաքվել ոռոգման և արտաքին հրդեհամարման համար նախատեսված ռեզերվուարներում՝ համապատասխանաբար 46մ³ և 108 մ³ ծավալներով:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն ՇՄԱԳ հաշվետվության նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,

- աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին,

- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ,

- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,

- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում փակ ծածկով մեքենաներով,

- հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- շինարարական աշխատանքներում ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, ինչպես նաև դրանց տեխնիկական նորմալ վիճակի շահագործման ապահովում,

- շինհրապարակում քանդման և շինարարության ընթացքում թափոնների տարանջատում,

- տնկված ծառերի և խոտածածկի խնամք,

- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար ամբողջ շինարարության ընթացքում գնահատվել է 1.5 մլն. ՀՀ դրամ:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն ՇՄԱԳ հաշվետվության՝ Արարատի մարզի Վերին Դվին համայնքի միջնակարգ դպրոցը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, Արարատի մարզպետարանը, Վերին Դվինի համայնքապետարանը, շահագրգիռ հանրությունը:

Փորձաքննական գործընթացում կատարվել է հաշվետվության լրացման, որտեղ հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները:



Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության ընթացքում Արարատի մարզի Վերին Դվինի համայնքապետարանում իրականացվել են հանրային լսումներ, ինչի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:

- Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վերին Դվինի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

- Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ-ում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործունեության տարածքը համադրվում է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով որպես «Խոցելի» գնահատված Երկարաոտ սցինկ (Eumeces schneideri) մողեսի տեսակի ապրելավայրի հետ, անհրաժեշտ է գործունեության տարածքում առանձնյակների հայտնաբերման դեպքում իրականացնել պահպանության և պաշտպանության միջոցառումներ:

ԵՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Լուր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Վերին Դվին համայնքի միջնակարգ դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական պետական փորձաքննական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝  Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝  Արշակ Մելիքյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝  Արմինե Վարդանյան